ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/86

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայփոստ» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Հայփոստ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Աբրահամյանի, Ն. Իսախանյանի, Լ. Հովհաննիսյանի,

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Գ. Մելիքսեթյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթ, հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 17.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. պարտավորեցնել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին տրամադրել «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից տրամադրված բոլոր փաստաթղթերը:

2. պարտավորեցնել «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին դադարեցնել 10.09.2021թ. անցկացված բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումները:

3. պարտավորեցնել «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին անցկացնել նոր բանակցություններ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 16.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15033-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում արձանագրված թերությունը վերացնելու համար:

Ընկերությունը 17.09.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

Բողոքներ քննող անձի կողմից 23.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/86 համարի ծածկագիրը:

30.09.2021թ.-ին և 18.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 30.09.2021թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 18.10.2021թ.-ին:

2. <u>«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն 17.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Վերոնշված մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել ինչպես «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր), այնպես էլ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանումը:

Ծանոթանալով «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված գնային առաջարկին, «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն Մրցույթի գնահատող հանձնաժողովին 24.08.2021թ. էլ փոստի միջոցով ուղարկել է էլ. նամակ (արտատպումը կցվում է) հետևյալ բովանդակությամբ.

«Խնդրում ենք պարզել հետևյալը՝

1. «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանումը ներկայացել է որպես մասնաճյուղ Հայաստանում, թե ներկայացուցչություն Հայաստանում:

2.«Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին. Մասնավորապես՝

2.1 Արդյոք մասնակիցը ունի հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների մատուցման մեկ տարվա փորձ:

2.2 Արդյոք մասնակիցը կարողանում է ապահովել մեկ տարվա ընթացքում տեղական խոշոր ընկերությունների հետ (1-ից-1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված) համագործակցության փորձ, որոնց համար ապահովել է ընդհանուր հաշվարկով ամսական նվազագույնը 500000 հատ SMS:

2.3 Արդյոք մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքը համապատասխանում է «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանմանը, այլ ոչ թե տրված է «Դեքսատել» մայր ընկերության տվյալները, որը համարվում է ոչ ռեզիդենտ:

3.Տեխնիկական բնութագրի մասով հետևյալը՝

3.1 Արդյոք մասնակիցը ապահովում է տեխնիկական բնութագրի բոլոր պահանջները, ներառյալ այն կետերը, որոնք բարձրաձայնվել էին Նիկիտա Մոբայլ ՍՊԸ-ի կողմից:

3.1.1 Արդյոք մասնակիցը կարողանում է ներկայացնել կնքած պայմանագիր այլ ընկերության հետ, որով ապահովում է բաժանորդի կողմից պատասխան նամակ ուղարկելու կամ այն սահմանափակելու գործառույթ կամ ինչպես մեր ոլորտում է այն կոչվում՝ երկկողմանի սմս (2 Way SMS), քանի որ չէր ներկայացրել տեխնիկական ոչ մի մեկնաբանություն:

Անհրաժեշտության դեպքում Նիկիտա Մոբայլ ընկերությունը կարող է ներկայացնել այդպիսի պայմանագրեր:

3.1.2 Արդոք մասնակիցը ապահովում է Viber+SMS կասկադային մոդելը»:

Այնուհետև, 25.08.2021թ. «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն Մրցույթի գնահատող հանձնաժողովին էլ. փոստի միջոցով ուղարկել է դիմում (արտապումը և դիմումը կցվում են), որով խնդրել է իրեն տրամադրել «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը, այդ թվում նաև որակավորման փաստաթղթերը:

Նշված դիմումներին գնահատող հանձնաժողովը բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ չի պատասխանել և պահանջված փաստաթղթերը չի ներկայացրել:

Այնուհետև Մրցույթի գնահատող հանձնաժողովը 09.09.2021թ. ժամը 18:39-ին էլեկտրոնային փոստի միջողոց ծանուցել է «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին, որ 10.09.2021թ. ժամը 17:00-ին տեղի է ունենալու մրցույթի երկրորդ փուլը՝ բանակցությունները:

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն տվյալ բանակցություններին չի մասնակցել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են հայտում ներառված փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

Կարգի 40-րդ կետի գ) ենթկետի համաձայն՝ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Վերոնշված մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել ինչպես «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն, այնպես էլ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանումը:

Ծանոթանալով «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված գնային առաջարկին, «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն Մրցույթի գնահատող հանձնաժողովին 24.08.2021թ. էլ. փոստի միջոցով ուղարկել է հետևյալ բովանդակությամբ էլ. նամակ.

«Խնդրում ենք պարզել հետևյալը՝

1. «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանումը ներկայացել է որպես մասնաճյուղ Հայաստանում, թե ներկայացուցչություն Հայաստանում:

2.«Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին. Մասնավորապես՝

2.1 Արդյոք մասնակիցը ունի հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների մատուցման մեկ տարվա փորձ:

2.2 Արդյոք մասնակիցը կարողանում է ապահովել մեկ տարվա ընթացքում տեղական խոշոր ընկերությունների հետ (1-ից-1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված) համագործակցության փորձ, որոնց համար ապահովել է ընդհանուր հաշվարկով ամսական նվազագույնը 500000 հատ SMS:

2.3 Արդյոք մասնակցի կողմից ներկայացված բանկային երաշխիքը համապատասխանում է «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանմանը, այլ ոչ թե տրված է «Դեքսատել» մայր ընկերության տվյալները, որը համարվում է ոչ ռեզիդենտ:

3.Տեխնիկական բնութագրի մասով հետևյալը՝

3.1 Արդյոք մասնակիցը ապահովում է տեխնիկական բնութագրի բոլոր պահանջները, ներառյալ այն կետերը, որոնք բարձրաձայնվել էին Նիկիտա Մոբայլ ՍՊԸ-ի կողմից:

3.1.1 Արդյոք մասնակիցը կարողանում է ներկայացնել կնքած պայմանագիր այլ ընկերության հետ, որով ապահովում է բաժանորդի կողմից պատասխան նամակ ուղարկելու կամ այն սահմանափակելու գործառույթ կամ ինչպես մեր ոլորտում է այն կոչվում՝ երկկողմանի սմս (2 Way SMS), քանի որ չէր ներկայացրել տեխնիկական ոչ մի մեկնաբանություն:

Անհրաժեշտության դեպքում Նիկիտա Մոբայլ ընկերությունը կարող է ներկայացնել այդպիսի պայմանագրեր:

3.1.2 Արդոք մասնակիցը ապահովում է Viber+SMS կասկադային մոդելը»:

Այնուհետև, 25.08.2021թ. «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն Մրցույթի գնահատող հանձնաժողովին էլ. փոստի միջոցով ուղարկել է դիմում, որով խնդրել է իրեն տրամադրել «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը, այդ թվում նաև որակավորման փաստաթղթերը:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նշված դիմումներին գնահատող հանձնաժողովը բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ չի պատասխանել և պահանջված փաստաթղթերը Բողոքաբերին չի տրամադրել:

Այնուհետև, Մրցույթի գնահատող հանձնաժողովը 09.09.2021թ. ժամը 18:39-ին էլեկտրոնային փոստի միջողոց ծանուցել է «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին, որ 10.09.2021թ. ժամը 17:00-ին տեղի էունենալու մրցույթի երկրորդ փուլը՝ բանակցությունները:

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն տվյալ բանակցություններին չի մասնակցել, քանի որ աշխատանքի ժամից հետո ուղարկված էլ. փոստի ծանուցմանը ծանոթացել է միայն հաջորդ օրը՝ բանակցությունների ժամից հետո:

Այսպիսով, Բողոքաբերը գտնում է, որ «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը ՍՊԸ-ի դիմումի հիման վրա վերջինիս չտրամադրելով Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ անգործությունը իր հերթին հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված նպատակների և սկզբունքների խախտմանը:

Միևնույն ժամանակ «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը, տվյալ մրցույթով անցկացվելիք բանակցությունների մասին «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին ծանուցելով բանակցությունները անցկացնելուց ընդամենը ժամեր առաջ, ընդ որում, ծանուցումը ուղարկելով ժամը 18:39-ին, այսինքն աշխատանքային ժամից հետո, խախտել է ողջամտության սկզբունքը և Կարգի 40-րդ կետի գ) ենթկետի պահանջները, քանի որ ծանուցման նման ոչ ողջամիտ ժամկետի պարագայում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն չի կարողացել մասնակցել մրցույթի երկրորդ՝ բանակցությունների փուլին:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. պարտավորեցնել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով

հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին տրամադրել «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից տրամադրված բոլոր փաստաթղթերը:

2. պարտավորեցնել «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին դադարեցնել 10.09.2021թ. անցկացված բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումները:

3. պարտավորեցնել «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին անցկացնել նոր բանակցություններ:

Ընկերությունը, 30.09.2021թ.-ին ներկայացված լրացուցիչ հիմնավորումներով, հավելել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/86 բողոքն ընդդեմ «Հայփոստ» ՓԲԸ-ի՝ վերջինիս կողմից հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի (այսուհետ նաև՝ Մրցույթ) գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների դեմ:

«Հայփոստ» ՓԲԸ-ն իր 24.09.2021թ. ներկայացված դիրքորոշմամբ պնդել է, որ որպես հանրային կազմակերպություն, պահպանել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, մինչդեռ փաստերը վկայում են հայառակի մասին: Մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 52-րդ հոդվածի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների՝

1) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով.

2) կատարման կարգերը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները հրապարակվում են նաև տեղեկագրում.

3) բողոքարկումն իրականացվում է սույն օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին, իսկ Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմը գերազանցող գնումների դեպքում՝ նաև սույն մասում հիշատակված համաձայնագրի պահանջներին, իսկ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած պահանջներին, որոնց կատարման նկատմամբ վերջինս իր սահմանած կարգով իրականացնում է դիտարկումներ (մոնիտորինգ):

Այսպիսով, քանի որ «Հայփոստ» ՓԲԸ-ն հանդիսանում է հանրային կազմակերպություն, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ դասվում պատվիրատուների շարքին և համապատասխանաբար վերջինիս վրա տարածվում են Օրենքի 52-րդ հոդվածի պահանջները:

Մինչդեռ տվյալ Մրցույթի ընթացքում Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 52-րդ հոդվածով սահմանված պահանջները, մասնավորապես.

1. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ տվյալ Մրցույթի վերաբերյալ որևէ տեղեկատվություն հրապարակված չէ www.gnumner.am կայքում, ինչով չի ապահովում տվյալ մրցույթի թափանցիկությունը և հրապարակայնությունը:

2. «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին չի տրամադրվել Մրցույթի գնահատող հանձնաժողովին էլ. փոստի միջոցով 25.08.2021թ ուղղված դիմումի հիման վրա

«Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը, այդ թվում նաև որակավորման փաստաթղթերը:

Այս կապակցությամբ «Հայփոստ» ՓԲԸ-ն հայտնել է, որ օրինաչափ չի համարել «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի պահանջը «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ և այդ հիմքով փաստաթղթերը չեն տրամադրվել:

Մինչդեռ Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ պահանջում է, որ գնումների կատարման կարգերը չպետք է հակասեն Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին, իսկ Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է այնպիսի կարևորագույն սկզբունք, ինչպիսինն է ընթացակարգի թափանցիկությունը և հրապարակայնությունը: Նման սկզբունքի պայմաններում գնահատող հանձնաժողովը, չտրամադրելով «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը, կոպտորեն խախտել է վիճարկվող Մրցույթի հրապարակայնությունը և թափանցիկությունը, քանի որ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն զրկվել է հնարավորությունից ուսումնասիրելու «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում բարձրացնելու ներկայացված փաստաթղթերի հրավերի պահանջներին չբավարարելու խնդիրը: Այս կապացությամբ Բողոքաբերը ունի հիմնավոր կասկածներ, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը հնարավոր է ունեն խնդիր, միգուցե հենց այդ պատճառով դրանք չեն տրամադրվել, քանի որ կասկածի տեղիք է տալիս վերջինիս կողմից առաջարկված չափազանց ցածր, ըստ էության, իրականությանը չհամապատասխանող գինը:

Այս առումով պետք է նկատի ունենալ, որ Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքը ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվել է հետևյալ երաշխիքը. պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են հայտում ներառված փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

Բացի այդ, անհիմն չտրամադրելով «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտի փաստաթղթերը, Մրցույթի գնահատող հանձնաժողովը նաև խախտել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

3. Ինչպես արդեն նշել ենք ներկայացրած բողոքով, Մրցույթի գնահատող հանձնաժողովը 09.09.2021թ. ժամը 18:39-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ին, որ 10.09.2021թ. ժամը 17:00-ին տեղի է ունենալու մրցույթի երկրորդ փուլը՝ բանակցությունները: Փաստորեն, ծանուցումը եղել է բանակցություններից ժամեր առաջ:

Այս տեսանկյունից պատահական չէ, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) Կարգի 40-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Այսինքն գնումների մասին ՀՀ օրենսդրությունը սահմանել է ողջամիտ ժամկետ բանակցությունների մասին ծանուցելու վերաբերյալ, այն է՝ բանակցություններից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Այլ կերպ ասած, հենց "երկու աշխատանքային օր առաջ" ժամկետն է հանդիսանում այն ողջամիտ ժամկետը, որը պետք է տրամադրվի Պատվիրատուի կողմից մասնակիցներին՝ բանակցությունների օրվա և ժամի մասին տեղեկություններ ստանալու համար:

Մինչդեռ ինչպես արդեն նշվել է, ծանուցումը մասնակցին ուղարկվել է բանակցությունների նախորդող օրը, այն էլ աշխատանքային ժամից հետո:

Վերոհիշյալի արդյունքում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն զրկվել է բանակցությունների մասին պատշաճ ժամկետում ծանուցվելու և բանակցություններին մասնակցելու հնարավորությունից:

Արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչը Օրենքի 52-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ հանրային կազմակերպությունը պարտավոր էր պահպանել:»:

Ընկերությունը, 14.10.2021թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ, հավելել է հետևյալը.

«Ինչպես արդեն նշել ենք «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/86 բողոքով, «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար

հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթ (այսուհետ նաև Մրցույթ):

Մրցույթի հրավերի հավելված 4-ի (կցվում է) 2-րդ բաժնով սահմանվել են մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները: Ըստ այդմ սահմանվել է հետևյալը. «Մասնագիտական փորձառություն. Մասնակիցը պետք է ունենա նշված աշխատանքների կատարման առնվազն 1 տարվա տվյալ բնագավառում աշխատելու փորձ, պետք է ունենա տեղական խոշոր ընկեյությունների հետ (1-ին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված) համագործակցության փորձ, որոնց համար ապահովել է ընդհանուր հաշվարկով ամսական նվազագույնը 500.000 հատ SMS և էլեկտրոնային հսպպպագրությունների պատշաճ առաքում: Միջազգային ընկերությունների հետ համագործակցությունը կդիտարկվի որպես առավելություն»:

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/86 բողոքի քննության շրջանակներում «Հայփոստ» ՓԲԸ-ն ներկայացրեց «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացրած մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանումը չի համապատասխանում Մրցույթի հրավերի պահանջներին «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին հետևյալ հիմնավորմամբ.

- *Մրցույթի հրավերով պահանջվել է, որ Մասնակիցը պետք է ունենա նշված աշխատանքների կատարման առնվազն 1 տարվա տվյալ բնագավառում աշխատելու փորձ: Միչդեռ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացվել է միայն 26.04.2021թ. կնքված պայմանագիր: Մինչդեռ ակնհայտ է, որ 26.04.2021թ կնքված պայմանագիրը չի կարող վկայել, որ մասնակիցը ունի առնվազն մեկ տարվա փորձ:*
- *Մրցույթի հրավերով պահանջվել է, որ մասնակիցը կատարված պայմանագրով պետք է ապահովված լիներ ընդհանուր հաշվարկով ամսական նվազագույնը 500,000 հատ SMS և էլեկտրոնային հաղորդագրությունների պատշաճ առաքում: Մինչդեռ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերից չի չի երևում առաքված sms-ի քանակը: Պայմանագրին կից չեն ներկայացվել նաև հանձնման-ընդունման ակտեր, որից նույնպես կարելի էր ենթադրել, թե ինչ քանակի SMS է առաքվել:*
- *Մյուցույթի հրավերով պահանջվել է, որ Մասնակիցը պետք է ունենա հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների մատուցման փորձ:*

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացրած հաշիվ ապրանքագրերի վրա գրված է հեռահաղորդակցության ծառայություն, այլ ոչ թե հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայություն, ինչը վկայում է, որ վերջինիս մոտ բացակայում է նշված ծառայությունների մատուցման փորձը:

Վերոհիշյալը ակնհայտորեն վկայում է, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանումը չի համապատասխանել Մրցույթի հրավերի պահանջներին որակավորման չափանիշների մասով, մինչդեռ նման պայմաններում «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը գնահատվել է Մրցույթի հրավերի պահանջներին բավարարող և վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների ն ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, այպյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում ե նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասայտություն:

Արդյունքում Մրցույթի գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ որոշմամբ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված նպատակները և սկզբունքները:»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ բողոքի քննության շրջանակներում «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են «Դեքսատել» առանձնացված

ստորաբաժանման փաստաթղթերը՝ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է որպես բողոքով ներկայացրած պահանջ հիմք ընդունել բողոքի լրացմամբ ներկայացրած պահանջները, այն է՝

1. պարտավորեցնել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին դադարեցնել «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման հայտը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված/հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. պարտավորեցնել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին դադարեցնել 10.09.2021թ. անցկացված բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումները:

3. պարտավորեցնել «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին անցկացնել նոր բանակցություններ:

3. <u>«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15374-2021 գրությամբ դիմել է «Հայփոստ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից 17.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն 24.09.2021թ.-ին թիվ 2/3-4535 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի բողոքը «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդակցությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի» հանձնաժողովի գործողությունների և որոշումների վիճարկման վերաբերյալ:

Գտնում ենք, որ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ բողոքը անհիմն է, պահանջները զուրկ առարկայական հիմքերից և հիմնավորվածություններից:

Հայտնում ենք, որ «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդակցությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով անցկացված մրցույթի շրջանակներում պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջները, արդյունքում կայացված որոշումները հիմնավորված են, ունեն անհրաժեշտ բավարար փաստական ն իրավական հիքեր:

Ստորև ներկայացնում ենք «Հայփոստ» ՓԲԸ անցկացված գնման ընթացակարգի օրինականության ամբողջական և սպառիչ հիմնավորումները:

«Հայփոստ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրենի 30.06.2021թ-ի թիվ 2142-Ա հրամանով հայտարարվել է 11.08.2021թ-ի «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթը» (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն և «Դեքսատել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը:

Հայտերի բացման նիստը կայացել է 23.08.2021թ-ին, ժամը 16:00-ին: Հայտերի բացման նիստին ներկա են գտնվել մասնակցության հայտ ներկայացրած ընկերությունների լիազոր ներկայացուցիչները: Հայտերի բացման նիստում ըստ գրանցման հերթականության բացվել են մասնակիցների կողմից ներկայացված ծրարները և հրապարակվել են ներկայացված փաստաթղթերը, ներառյալ գնային առաջարկները՝ («Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ կողմից առաջարկվել է Ա1 չափաբաժնով -165.666.666 / մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), Ա2 չափաբաժնով 47.083.333 /քառասունյոթ միլիոն ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գնային առաջարկ և «Դեքսատել» ճայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից Ա1 չափաբաժնով -126.000.000 / մեկ հարյուր քսանվեց միլիոն /ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), Ա2 չափաբաժնով- 39.250.000 /երեսունինը միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ) գնային առաջարկ:

Փաստաթղթերի հրապարակումից հետո հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցները տեղեկացվել են, որ սույն Մրցույթի հետ կապված բոլոր հետագա ծանուցումները իրականացվելու են էլեկտրոնային տարբերակով:

Հայտերի բացման նիստին մասնակիցների կողմից («Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ կողմից) չի պահանջվել որևէ մասնակցի հայտի պատճենները:

Հանձնաժողովի կողմից ընդմիջում հայտարարելիս մասնակիցները հանձնաժողովի կողմից տեղեկացվել են հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի հաջորդ նիստի ընթացքում ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելիք միաժամանակյա բանակցությունների մասին՝ գնային առաջարկների սակարկությունների փուլի անցկացման վերաբերյալ:

Ընդմիջումը հայտարարվելուց հետո հանձնաժողովի անդամները ուսումնասիրել են ներկայացված փաստաթղթերը և գնահատել են ոչ գնային առաջարկները: Ընդմիջման ընթացքում Հանձնաժողովի քարտուղարը 27.08.2021թ-ին gnumner@haypost.am էլ. հասցեից ծանուցել է մասնակիցներին g.meliksetyan@nikita.am: nune.khachatryan@dexatel.com էլ. հասցեներով մասնակցության հայտով մասնակիցների կողմից առաջարկվող ծառայությունների համար առկա կառավարման համակարգի թեսթային միջավայր (demo version) տրամադրելու վերաբերյալ Մասնակիցները, ներառյալ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ ներկայացուցիչը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արագ արձագանքել են էլ. փոստին ստացված ծանուցմանը և տրամադրել տեստային միջավայր:

Ոչ գնային առաջարկները (որկավորման չափանիշները, մասնակցության իրավունքը և այլն) գնահատելիս հանձնաժողովը կայացրել է որոշում նշված ոչ գնային առաջարկները հրավերի պայմաններին բավարարելու վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը 09.09.2021թ-ին gnumner@haypost.am էլ. հասցեից ծանուցել է մասնակիցներին g.meliksetyan@nikita.am: nune.khachatryan@dexatel.com էլ. հասցեներով ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելիք միաժամանակյա բանակցությունների մասին՝ գնային առաջարկների սակարկությունների փուլի անցկացման վերաբերյալ:

«Նիկիտա Մոբայլը» ՍՊԸ-ն լինելով ծանուցված (Մրցույթի նիստին հեռախոսազանգի միջոցով հաստատելով ծանուցման ստացման փաստը) չի ներկայացել և չի մասնակցել բանակցությունների փուլին, հետևաբար մասնակցի մասնակցության հայտով ներկայացված գնային առաջարկը համարվել է վերջնական, համաձայն Կարգի:

Մրցույթի բանակցությունների փուլին մասնակցել է միայն «Դեքսատել» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը, որը չի փոփոխել իր նախնական ներակայացված գնային առաջարկը:

Իրավական վերլուծություն

«Հայփոստ» ՓԲԸ-ն հանդիսանում է Հանրային կազմակերպություն համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, քանի որ իրականացնում է փոստային

գործունեություն և հանդիսանում է ՀՀ փոստային կապի ազգային օպերատոր: Որպես հանրային կազմակերպություն «Հայփոստ» ՓԲԸ-ն իրականացնում է գնումների գործընթացը իր կողմից հաստատված գնումների գործընթացի իրականացման կարգով, որը համապատասխանում է ՀՀ գնումների մասին օրենքի 52-րդ և 53-րդ հոդվածների պահանջներին և այդ հիմքով գնումների մասին ՀՀ օրենքի այլ նորմերի պահանջներին:

«Հայփոստ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրենի 20.05.2011թ-ի թիվ 270-Լ հրամանով հաստատվել է Գնումների գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետև՝ նաև Կարգ):

Անդրադառնալով բողոքաբերի պահանջին տրամադրելու մյուս մասնակցի տրամադրած բոլոր փաստաթղթերը, տեղեկացնում ենք, որ Պատվիրատուն օրինաչափ չի համարել պահանջը, քանի որ «Հայփոստ» ՓԲԸ Կարգով սահմանված չէ Պատվիրատուի պարտավորություն մասնակցի պահանջով տրամադրելու որևէ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթը:

Չնայած նշվածի հարկ ենք համարում հայտնել, որ Բողոքարերի պահանջը բավարարվել է Պատվիրատուի կողմից բանավոր հեռախոսակապի միջոցով, տրամադրվել է անհրաժեշտ և բավարար տեղեկատվություն «Դեքսատել» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանան որակավորման պահանջների բավարարելու վերաբերյալ:

Անդրադառնալով Բողոքաբերի օրենսդրական մեջբերումներին մասնավորապես՝ Գնումների մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետին «...Պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում»... հայտնում ենք, որ տվյալ գործով դա չի կարող լինել վերաբերելի ն կիրառելի, քանի որ չի համապատասխանում սույն գործով փաստերին ն փաստական հանգամանքներին. գնման ընթացակարգի արձանագրությունը կազմվում է գնման գործընթացի ավարտին և Կարգով սահմանում է գնման ավարտին Պատվիրատուի պարտավություն տրամադրելու գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը: Տվյալ դեպքում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ կողմից մասնակցի հայտի պատճենների պահանջը եղել է ոչ գնման գործընթացի ավարտին, այլ Հայտերի բացման նիստից հետո 25.08.2021թ-ի առանձին նամակով:

Անդրադառնալով բողոքարերի պահանջին՝ դադարեցնելու 10.09.2021թ-ի անցկացրած բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումները, հայտնում

ենք, որ բանակցությունների փուլի վերաբերյալ ծանուցումները և բուն բանակցային փուլը անցել է «Հայփոստ» ՓԲԸ Կարգի պահպանմամբ. Կարգի 37-րդ կետը սահմանում է, «,... ընդմիջում հայտարարելիս մասնակիցները հանձնաժողովի կողմից տեղեկացվում են, որ հրավերով սահմանված կարգով հանձնաժողովի հաջորդ նիստի ընթացքում ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելու են միաժամանակյա բանակցություններ:»

Տվյալ դեպքում համաձայն Կարգի Մասնակիցները տեղեկացվել են հաջորդ նիստի ընթացքում ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելիք միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ, միաժամանակ տեղեկացվել են նաև, որ ծանուցումները վարվելու են էլ. փոստի միջոցով: Մրցույթի շրջանակներում g.meliksetyan@nikita.am; nune.khachatryan@dexatel.com էլ. հասցեին կատարված ցանկացած ծանուցում արագ արձագանք է ստացել. կարելի է արձանագրել և հաստատված փաստ համարել, որ Մասնակիցները ծանուցվել են անցկացվելիք Բանակցությունների վերաբերյալ: Ավելին «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ ներկայացուցիչը հեռախոսազանգի միջոցով բանավոր հաստատել ծանուցումը ստանալու հանգամանքը, վերոգրյալը անհերքելի ապացուցում է կայացված փուլի օրինականությունը:

Անդրադառնալով Բողոքաբերի պահանջին՝ անցկացնելու նոր բանակցություններ, հայտնում ենք, որ վերոնշալ փաստերի և իրավակիրառ դրույթների համադրությամբ, նման պահանջը ոչ օրինաչափ է և ենթակա չէ բավարարման:

«Հայփոստ» ՓԲԸ-ն հանրային ծառայությունների կարգավորող ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություն է, համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող, ինքնաֆինանսավորվող իրավաբանական անձ: «Հայփոստ» ՓԲԸ կարիքների համար հաղորդակցությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացրել է գնման գործընթաց և արդյունքում ընտրել առաջարկված լավագույն գնառաջարկը և նման պարագայում բարձր գնառաջարկի ընդունումը տնտեսական գործառույթների իրականացման ճանապարհում ընկերությանը կարող է կանգնեցնել իր կողմից մատուցվող ծառայությունների գների անխուսափելի աճին:

Հարկ ենք համարում նշել, որ Մրցույթի արդյունքում լավագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը ավելի ցածր է, քան «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտով ներկայացրած Ա1 և Ա2 չափաբաժնով սահմանված գնման առարկայի ինքնարժեքը:

Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի բողոքի արդյունքում Պատվիրատուի գնման գործընթացի անհարկի ձգձգումները օրական կտրվածքով բերում են Պատվիրատուին ֆինանսական լրացուցիչ ծախսեր, ներկա դրությամբ հաղորդակցությունների միջոցով ծանուցման ծառայությունները ձեռք են բերվում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ից ավելի թանկ գներով և Պատվիրատուն օրական կտրվածքով կրում է ֆինանսական կորուստներ:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում ենք՝ կատարել արտացոլված ապացույցների ճիշտ գնահատում, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ գալ ճիշտ եզրահանգման և «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ բողոքը մերժել ամբողջությամբ:»:

Պատվիրատուն, 15.10.2021թ.-ին ներկայացված թիվ 2/3-4889 լարցմամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի բողոքը «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի» հանձնաժողովի գործողությունների և որոշումների վիճարկման վերաբերյալ:

Գտնում ենք, որ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ բողոքի լյուցմամբ ներկայացված փաստարկները անհիմն են զուրկ փաստական հիմքերից և հիմնավորվածություններից:

Հայտնում ենք, որ «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով անցկացված մրցույթի շրջանակներում պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջները, արդյունքում կայացված որոշումները հիմնավորված են, ունեն անհրաժեշտ բավարար փաստական և իրավական հիթեր:

Ստորև ներկայացնում ենք 14.10.2021թ-ի Բողոքի լրացմամբ Բողոքաբերի ներկայացրած փաստարկների հակափաստարկները:

Բողոքաբերը նշում է, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացվել է միայն 26.04.2021թ-ի կնքված պայմանագիր, որը չի կարող վկայել, որ մասնակիցը ունի առնվազն մեկ տարվա փորձ.

Հայտնում ենք, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Դեքսատել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացվել է IDT Domestic Telekom, Inc., a Delamare Ընկերության հետ 30.04.2020թ-ին

կնքված հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների մատուցման պայմանագիր, նաև Bharti Airtel Limited ընկերությանը դուրս գրված 01.04.2020թ-30.04.2020թ Invoice, որը ապացուցում է «Դեքսատել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման նշված աշխատանքների կատարման առնվազն 1 տայուիս տվյալ բնագավառում աշխատելու փորձը, ինչը լիարժեք բավարարում է «ՀայՓոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցված ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով անցկացված մրցույթի հրավերի պահանջը:

Բողոքաբերը նշում է, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերից չի երևում առաքված sms-ների քանակը: Պայմանագրին կից չեն ներկայացվել նաև հանձնման -ընդունման ակտեր, որից նույնպես կարելի էր ենթադրել, թե ինչ քանակի sms է առաքվել:

Հայտնում ենք, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Դեքաստել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացվել է 31.07.2021թ- 07.08.2021թ Invoice, որը փաստում է, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանումը «ԴԻՋԻԳԵՅՄ» ՍՊԸ-ին մատուցել է sms-ների և/ կամ էլեկտրոնային նամակների /Բովանդակություն/ ձևավորման և դրանք հաճախորդներին առաքման հետ կապված ծառայություններ 675.336 հատ sms և ներկայացվել են համապատասխան ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվներ, որը ապացուցում է «Դեքսատել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից Հրավերի պահանջով մեկ ամսվա ընդհանուր հաշվարկով ուղարկված նվազագույնը 500.000 հատ sms-ը, ինչը լիարժեք բավարարում է «ՀայՓոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդագրություեերի միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով անցկացված մրցույթի հրավերի պահանջը:

Բողոքաբերը նշում է, որ «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերում գրված է հեռահաղորդակցության ծառայություն, այլ ոչ թե հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայություն, ինչը վկայում է, որ վերջինիս մոտ բացակայում է նշված ծառայությունների մատուցման փորձը:

Հայտնում ենք, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Դեքսատել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը ներկայացրել է «Դեքսատել» առանձնացված ստորաբաժանման և «ԴԻՋԻԳԵՅՄ» ՍՊԸ-ի միջև կնքված

26.04.2021թ-ի Ծառայությունների մատուցման պայմանագիր N 02-ը, համաձայն որի «Դեքսատել» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված սպորաբաժանումը մատուցել է sms-ների և/ կամ էլեկտրոնային նամակների /Բովանդակություն/ ձևավորման և դրանք հաճախորդներին առաքման հետ կապված ծառայությունները, որը լիովին բավարարում է «ՀայՓոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով անցկացված մրցույթի հրավերի հաղորդակցությունների միջոցով ծանուցման պահանջը:

Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի բողոքի լրացումը թվագրված է 14.10.2021թ-ին, Բողոք քննող անձից էլեկտրոնային եղանակով այն «ՀայՓոստ» ՓԲԸ-ում ստացվել է 14.10.2021թ-ին ժամը 18:03-ին աշխատանքային օրվա ավարտին: Արդյունքում, «ՀայՓոստ» ՓԲԸ-ն զրկված է եղել ըստ պատշաճի Բողոքի լրացման պատասխան ներկայացնելու իր իրավունքներից :

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում ենք կատարել արտացոլված ապացույցների ճիշտ գնահատում, փաստերի հաստատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ գալ ճիշտ եզրահանգման և «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ բողոքը մերժել ամբողջությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայփոստ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրենի 30.06.2021թ-ի թիվ 2142-Ա հրամանով հայտարարվել է 11.08.2021թ.-ի «Հայփոստ» ՓԲԸ-ի կարիքների համար հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթը (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթի հրավերի հավելված 4-ի 2-րդ բաժնով սահմանվել են մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները: Ըստ այդմ՝ սահմանվել է հետևյալը. «Մասնագիտական փորձառություն. Մասնակիցը պետք է ունենա նշված աշխատանքների կատարման առնվազն 1 տարվա տվյալ բնագավառում աշխատելու փորձ, պետք է ունենա տեղական խոշոր ընկերությունների հետ (1-ին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված) համագործակցության փորձ, որոնց համար ապահովել է ընդհանուր

հաշվարկով ամսական նվազագույնը 500.000 հատ SMS և էլեկտրոնային հաղորդագրությունների պատշաճ առաքում: Միջազգային ընկերությունների հետ համագործակցությունը կդիտարկվի որպես առավելություն»:

iii. Մրցույթի հրավերով պահանջվել է, որ Մասնակիցը պետք է ունենա նշված աշխատանքների կատարման առնվազն 1 տարվա տվյալ բնագավառում աշխատելու փորձ:

iv. Մրցույթի հրավերով պահանջվել է, որ մասնակիցը կատարված պայմանագրով պետք է ապահովված լիներ ընդհանուր հաշվարկով ամսական նվազագույնը 500 000 հատ SMS և էլեկտրոնային հաղորդագրությունների պատշաճ առաքում:

v. Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն և «Դեքսատել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը:

vi. Հայտերի բացման նիստը կայացել է 23.08.2021թ-ին, ժամը 16:00-ին: Հայտերի բացման նիստին ներկա են գտնվել մասնակցության հայտ ներկայացրած ընկերությունների լիազոր ներկայացուցիչները: Հայտերի բացման նիստում ըստ գրանցման հերթականության բացվել են մասնակիցների կողմից ներկայացված ծրարները և հրապարակվել են ներկայացված փաստաթղթերը, ներառյալ գնային առաջարկները՝ («Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ կողմից առաջարկվել է Ա1 չափաբաժնով -165.666.666 /մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), Ա2 չափաբաժնով 47.083.333 /քառասունյոթ միլիոն ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գնային առաջարկ և «Դեքսատել» ճայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից Ա1 չափաբաժնով -126.000.000 /մեկ հարյուր քսանվեց միլիոն /ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), Ա2 չափաբաժնով- 39.250.000 /երեսունինը միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ) գնային առաջարկ:

vii. Հանձնաժողովի քարտուղարը 27.08.2021թ.-ին gnumner@haypost.am էլ. հասցեից ծանուցել է մասնակիցներին g.meliksetyan@nikita.am: nune.khachatryan@dexatel.com էլ. հասցեներով մասնակցության հայտով մասնակիցների կողմից առաջարկվող ծառայությունների համար առկա կառավարման համակարգի թեսթային միջավայր (demo version) տրամադրելու վերաբերյալ:

viii. Հանձնաժողովի քարտուղարը 09.09.2021թ.-ին gnumner@haypost.am էլ. հասցեից ծանուցել է մասնակիցներին g.meliksetyan@nikita.am: nune.khachatryan@dexatel.com էլ. հասցեներով ոչ գնային չափանիշներին բավարարած

մասնակիցների միջև անցկացվելիք միաժամանակյա բանակցությունների մասին՝ գնային առաջարկների սակարկությունների փուլի անցկացման վերաբերյալ:

ix. «Նիկիտա Մոբայլը» ՍՊԸ-ն լինելով ծանուցված (Մրցույթի նիստին հեռախոսազանգի միջոցով հաստատելով ծանուցման ստացման փաստը) չի ներկայացել և չի մասնակցել բանակցությունների փուլին:

x. Մրցույթի բանակցությունների փուլին մասնակցել է միայն «Դեքսատել» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը, որը չի փոփոխել իր նախնական ներակայացված գնային առաջարկը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից 17.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 52-րդ հոդվածի համաձայն՝

1. Հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների՝

1) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով.

2) կատարման կարգերը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները հրապարակվում են նաև տեղեկագրում.

3) բողոքարկումն իրականացվում է սույն օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և

սկզբունքներին, իսկ Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմը գերազանցող գնումների դեպքում՝ նաև սույն մասում հիշատակված համաձայնագրի պահանջներին, իսկ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած պահանջներին, որոնց կատարման նկատմամբ վերջինս իր սահմանած կարգով իրականացնում է դիտարկումներ (մոնիտորինգ):

Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի դրույթները չեն կիրառվում այն դեպքերում, երբ հանրային կազմակերպությունը նպատակ ունի ձեռք բերել՝

1) ապրանքներ, որոնք վերավաճառվելու կամ վարձակալությամբ են տրամադրվելու երրորդ կողմի, պայմանով, որ տվյալ կազմակերպությունը չունի նման պայմանագրերի առարկան վաճառելու կամ վարձակալությամբ տրամադրելու հատուկ կամ բացառիկ իրավունք, իսկ այլ կազմակերպություններ կարող են տվյալ կազմակերպության հետ նույն պայմաններով ազատ իրացնել (վաճառել) կամ վարձակալությամբ տրամադրել նմանօրինակ ապրանքներ.

2) ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ՝ երրորդ երկրում համապատասխան գործունեություն իրականացնելու նպատակով և այնպիսի պայմաններով, որոնք չեն ենթադրում Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց շահագործումը.

3) ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ՝ համապատասխան գործունեությունից տարբերվող գործունեություն իրականացնելու համար: Այն դեպքերում, երբ պայմանագիրը ներառում է գործունեության տարբեր տեսակներ, և դրանցից առնվազն մեկը հանդիսանում է համապատասխան գործունեություն, սակայն օբյեկտիվորեն հնարավոր չէ որոշել, թե գործունեության որ տեսակի համար է հիմնականում նախատեսված պայմանագիրը, գնումներն իրականացվում են սույն օրենքի դրույթների համաձայն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.08.2021թ.-ին հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի հրավերի հավելված 4-ի 2-րդ բաժնով սահմանվել են մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները: Ըստ այդմ՝ սահմանվել է հետևյալը. «Մասնագիտական փորձառություն.

Մասնակիցը պետք է ունենա նշված աշխատանքների կատարման առնվազն 1 տարվա տվյալ բնագավառում աշխատելու փորձ, պետք է ունենա տեղական խոշոր ընկեյությունների հետ (1-ին 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառված) համագործակցության փորձ, որոնց համար ապահովել է ընդհանուր հաշվարկով ամսական նվազագույնը 500 000 հատ SMS և էլեկտրոնային հսպպպագրությունների պատշաճ առաքում: Միջազգային ընկերությունների հետ համագործակցությունը կդիտարկվի որպես առավելություն»: Մրցույթի հրավերով պահանջվել է, որ Մասնակիցը պետք է ունենա նշված աշխատանքների կատարման առնվազն 1 տարվա տվյալ բնագավառում աշխատելու փորձ: Մրցույթի հրավերով պահանջվել է, որ մասնակիցը կատարված պայմանագրով պետք է ապահովված լիներ ընդհանուր հաշվարկով ամսական նվազագույնը 500 000 հատ SMS և էլեկտրոնային հաղորդագրությունների պատշաճ առաքում: Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել «Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ն և «Դեքսատել» Հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը: Հայտերի բացման նիստը կայացել է 23.08.2021թ-ին, ժամը 16:00-ին: Հայտերի բացման նիստին ներկա են գտնվել մասնակցության հայտ ներկայացրած ընկերությունների լիազոր ներկայացուցիչները: Հայտերի բացման նիստում ըստ գրանցման հերթականության բացվեյ են մասնակիցների կողմից ներկայացված ծրարները և հրապարակվեյ են ներկայացված փաստաթղթերը, ներառյպ գնային առաջարկները՝ («Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ կողմից առաջարկվել է Ա1 չափաբաժնով -165.666.666 / մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), Ա2 չափաբաժնով 47.083.333 /քառասունյոթ միլիոն ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գնային առաջարկ և «Դեքսատել» ճայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման կողմից Ա1 չափաբաժնով -126.000.000 / մեկ հարյուր քսանվեց միլիոն /ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), Ա2 չափաբաժնով- 39.250.000 /երեսունինը միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ) գնային առաջարկ: Հանձնաժողովի քարտուղարը 27.08.2021թ.-ին gnumner@haypost.am էլ. հասցեից ծանուցել է մասնակիցներին g.meliksetyan@nikita.am: nune.khachatryan@dexatel.com էլ. հասցեներով մասնակցության հայտով մասնակիցների կողմից առաջարկվող ծառայությունների համար առկա կառավարման համակարգի թեսթային միջավայր (demo version) տրամադրելու վերաբերյալ: Հանձնաժողովի քարտուղարը 09.09.2021թ.-ին gnumner@haypost.am էլ. հասցեից ծանուցել է մասնակիցներին g.meliksetyan@nikita.am: nune.khachatryan@dexatel.com էլ. հասցեներով ոչ գնային չափանիշներին բավարարած մասնակիցների միջև անցկացվելիք միաժամանակյա

բանակցությունների մասին՝ գնային առաջարկների սակարկությունների փուլի անցկացման վերաբերյալ: «Նիկիտա Մոբայլը» ՍՊԸ-ն լինելով ծանուցված (Մրցույթի նիստին հեռախոսազանգի միջոցով հաստատելով ծանուցման ստացման փաստը) չի ներկայացել և չի մասնակցել բանակցությունների փուլին: Մրցույթի բանակցությունների փուլին մասնակցել է միայն «Դեքսատել» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանումը, որը չի փոփոխել իր նախնական ներակայացված գնային առաջարկը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերի հավելված 4-ի 2-րդ բաժնով սահմանված մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները, բողոքով ներկայացված իրավական ու փաստական հանգամանքներն ու Պատվիրատուի կողմից ներկայացված ապացույցները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ

լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք, ինչպես նաև բողոքի լրացում: Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել իր կողմից վկայակոչված փաստերի վերաբերյալ վերաբերելի բավարար ապացույցներ: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 3-րդ և 34-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից հաղորդագրությունների միջոցով ծանուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.08.2021թ.-ին հայտարարված «ՀՓ-ՀԾՁԲ-08/21» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը, «Դեքսատել» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման հայտը բավարար գնահատելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ Մասնակցի կողմից թույլ չի տրվել Մրցույթի հրավերի հավելված 4-ի 2-րդ բաժնով սահմանված

դրույթների խախտում, որպիսի պայմաններում Ընկերության կողմից բողով ներկայացված պահանջներն անհիմն են և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նիկիտա Մոբայլ» ՍՊԸ-ի կողմից 17.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/86 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**